ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.03.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/62

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Է.Փոթոյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական՝ թիվ 273.110.1135298),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3200-2021 գրությամբ «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1005-2021 գրության հիման վրա 04.03.2021թ. թիվ 26/26-1/3200-2021 գրությամբ նախաձեռնել է «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.03.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն 10.07.2020 թ-ին մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարած թիվ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և 17.08.2020թ-ին կնքել է թիվ ԳՀԱՊՁԲ-20-9/28-4 պայմանագիրը:

Պայմանագիրը կնքելու պահին մեր կազմակերպությունը չէր կարող կանխատեսել, որ ի հայտ են գալու այնպիսի ֆորս մաժորային իրավիճակներ, որոնք խիստ կսահմանափակեին հնարավորությունները և որի գործողությունը անհնար կդարձներ պայմանագրի լիարժեք կատարումը:

2020թ-ի սեպտեմբերի 27 ՀՀ կառավարությունը թիվ N 1586-Ն որոշումով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարում է ռազմական դրություն:

Հարկ ենք համարում նշել, որ այդ ժամանակ թե աշխարհում և թե Հայաստանում նաև գրանցվեց կորոնավիրուսի տարածման կտրուկ աճ, ահռելի 2-րդ ալիքը:

Այդ ստեղծված պայմաններում արել ենք ամեն ինչ, որ ապահովենք պետությանը առաջնահերթ դեղերով:

Այստեղ ակնհայտորեն գործում է ԳՀԱՊՁԲ-20-9/28-4 պայմանագրի 7-րդ կետը

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում

է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/62 ընթացակարգի շրջանակներում 12.03.2021թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և ներկայացրել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.03.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1005-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ամփոփելով լուծարման արդյունքում առաջացող տույժերի և տուգանքների վերաբերյալ տվյալները, 30.12.2020թ. դրությամբ, միակողմանի մասնակի լուծել է միակողմանի մասնակի լուծել է՝ «էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ի հետ 17.08.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/28-4 ծածկագրով գնման պայմանագիրը և դրան կից 30.09.2020թ. կնքված N1 փոփոխությունը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի (համաձայնագրի) լուծման վերաբերյալ գրությունը 26.02.2021թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Կից ներկայացվում է մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/62 ընթացակարգի շրջանակներում 12.03.2021թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ի միջև 17.08.2020թ. կնքվել է N «ԳՀԱՊՁԲ-20-9/28-4» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ի միջև 30.09.2020թ. կնքվել է N «ԳՀԱՊՁԲ-20-9/28-4» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին N 1 փոփոխությունը:

3. Փոփոխությանը կից Հավելված 1-ով, գնման ժամանակացույցի համաձայն, «Ացետիլցիստեին» 60000 հատ, «Լորնօքսիկամ» 1200 հատ, «Թիոկտաթթու» 3000 հատ, «Ացետիլցիստեին» 2500 հատ ապրանքատեսակների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ, քան 30.10.2020թ.:

4. «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 25.02.2021թ. թիվ ՆՏԱ-671 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ի միջև 17.08.2020թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-20-9/28-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 30.09.2020թ. կնքված N 1 փոփոխության (այսուհետ՝ Փոփոխություն) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 4-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակը՝ նշված քանակով՝

Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մատակարարման ժամանակացույց՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշքան 30.10.2020թ.	Չմատակարարված քանակ
Հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ	հատ	60000	60000	37000
Լորնօքսիկամ	հատ	1200	1200	1200
Թիոկտաթթու	հատ	3000	3000	3000

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակի մասով ապրանքի չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և Փոփոխությունը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 26.02.2021թ հրապարակվել է Պայմանագիրը և դրա հիման վրա կնքված համաձայնագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3200-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/1005-2021 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***պատասխանատու է մեղքի առկայության դեպքում***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ***պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: (…)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ի միջև 17.08.2020թ. կնքվել է N «ԳՀԱՊՁԲ-20-9/28-4» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ի միջև 30.09.2020թ. կնքվել է N «ԳՀԱՊՁԲ-20-9/28-4» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին N 1 փոփոխությունը:

Փոփոխությանը կից Հավելված 1-ով, գնման ժամանակացույցի համաձայն, «Ացետիլցիստեին» 60000 հատ, «Լորնօքսիկամ» 1200 հատ, «Թիոկտաթթու» 3000 հատ, «Ացետիլցիստեին» 2500 հատ ապրանքատեսակների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ, քան 30.10.2020թ.:

«Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 25.02.2021թ. թիվ ՆՏԱ-671 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ի միջև 17.08.2020թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-20-9/28-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 30.09.2020թ. կնքված N 1 փոփոխության (այսուհետ՝ Փոփոխություն) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 4-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակը՝ նշված քանակով՝

Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մատակարարման ժամանակացույց՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշքան 30.10.2020թ.	Չմատակարարված քանակ
Հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ	հատ	60000	60000	37000
Լորնօքսիկամ	հատ	1200	1200	1200
Թիոկտաթթու	հատ	3000	3000	3000

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակի մասով ապրանքի չմատակարարման փաստը և ***<u>հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ»</u>***

ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և Փոփոխությունը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 26.02.2021թ հրապարակվել է Պայմանագիրը և դրա հիման վրա կնքված փոփոխությունը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

«Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ն ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչել է այն հանգամանքը, որ Պայմանագիրը կնքելու պահին Ընկերությունը չէր կարող կանխատեսել, որ ի հայտ են գալու անպիսի ֆորս մաժորային իրավիճակներ, որոնք խիստ կսահմանափակեին հնարավորությունները և որի գործողությունը անհնար կդարձներ պայմանագրի լիարժեք կատարումը:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ ***Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են*** երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ***ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը***, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: ***Եթե արտակարգ ուժի ազդեցությունը***

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Այսպիսով՝ Պայմանագրի 7-րդ կետի ուժով գտնում եմ, որ Ընկերության՝ վերը շարադրված հանգամանքերում դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***քանի որ «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ն նման պայմաններում, այն է՝ պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի՝ Covid-19 համավարակի արդյունքում ստեղծված արտակարգ դրության և դրա հետևանքով կիրառված սահմանափակումների, ինչպես նաև ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու, որոնց ազդեցությունը շարունակվել է 3 (երեք) ամսից ավելի, օբյեկտիվորեն իր կամքից անկախ պատճառներով զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելու հնարավորությունից:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3200-2021 գրությամբ «Էմ դի էյ թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**